Հուսիկ Արա

Քեզնից՝ քեզ

Դու անցյալ ես,
իմ ժամանակը չունի ներկա ու ապառնի.
ես գալիս եմ օրերի միջով և չեմ հասնում քեզ:

Մենք երկվորյակ սիրտ ու երկու կես՝
բաբախում ենք տարբեր ժամային գոտիներում,
անհասկանալի և չունենք ընդհանուր ոչինչ.
իմ անցյալն եմ՝ այնտեղ չես դու,
քո ներկան ես՝ ուր ես չկամ:

Ժամանակը շրջում եմ՝ ավազե ժամացույց,
օրերը սորում են ոտքերիս տակ,
անկարող եմ քեզնից գալ քեզ՝
իմ անցյալից քո ներկան,
և Սիզիփոսը առասպել չէ այլևս:

Մեր սիրտը՝ ձմեռնամուտի ձուկ,
որ լողում է ու գետից չի հասնում ծով,
մեր հոգին՝ աշնան թռչուն,
որ չվում է ու չի գտնում տաք երկիր,
մեր կարոտը՝ ամռան անձրև,
որ թափվում է արևի մեջ ու շոգիանում:

Քեզնից հետո քեզ սիրելը
պարապ կյանք չէ,
պարտադիր կանոնն է չմեռնելու: